ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում ՀՀ Սյունիքի մարզի գ. Աշոտավանի կրթահամալիրի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/42 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 27.02.2024թ. կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/42 գնման պայմանագրում 2026 թվականի մարտի 12-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 25.12.2025թ. N 1910-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/42 պայմանագրի վճարման ժամանակացույցի խմբագրում
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 և 8.14 կետեր

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 8

27.02.2024թ. կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/42 գնման պայմանագրի

ք. Երևան «12» 06 2026թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հիդրո» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.12.2025թ. N 1910-Ն որոշումը և **ՀՀ Սյունիքի մարզի գ. Աշոտավանի կրթահամալիրի կառուցման աշխատանքների** կատարման համար Կողմերի միջև 27.02.2024թ. կնքված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/42 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 2026 թվականի ընթացքում աշխատանքների ավարտման համար նախատեսված ծավալը գումարային արտահայտությամբ կազմում է 1 111 403 379 (մեկ միլիարդ մեկ հարյուր տասնմեկ միլիոն չորս հարյուր երեք հազար երեք հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամ:

1.1.2 Պայմանագրի 2026 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և Համաձայնագրի հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«Հիդրո» ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Սիսիան, Շիրվանզադե 5
կառավարական տուն 3	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Սիսանի մ/ճ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 220333330649000
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 09804085
Հ/Հ 900011049070	
ՀՎՀՀ 02565827	Տնօրեն՝
Գլխավոր քարտուղար՝	
_____ Վ. Հարությունյան (ստորագրություն)	_____ Ա. Սարգսյան (ստորագրություն)
L.S.	L.S.

Հավելված
27.02.2024թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/42 գնման պայմանագրի
«12» 06 2026թ. կնքված N 8 համաձայնագրի

«Հավելված N 3
27.02.2024թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/42 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Մինչև 2025թ. վճարված գումար	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	45221142/9	ՀՀ Սյունիքի մարզի գ. Աշոտավանի կրթահամալիրի կառուցման աշխատանքներ	107 963 544	-	144 980 700	289 961 400	289 961 400	489 961 400	489 961 400	489 961 400	489 961 400	489 961 400	489 961 400	489 961 400	489 961 400	489 961 400

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:»:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011049070
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար

Ա. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
«Հիդրո» ՍՊԸ
ք. Սիսիան, Շիրվանզադե 5
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Սիսանի մ/ճ
Հ/Հ 220333330649000
ՀՎՀՀ 09804085
Տնօրեն՝

Ա. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

09 հունիսի 2026թ.

Թիվ 033-233

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 14 33 40 05530/68

(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ՀԻԴՐՈ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև թիվ «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/42» պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 111.091.000 (մեկ հարյուր տասնմեկ միլիոն իննսունմեկ հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև 28 սեպտեմբերի 2029թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ tender4@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/42» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Սիսիան» մասնաճյուղի կառավարիչ Հ. Գյուրջյան

Կատարող՝
Հարություն Յափունջյան
Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 8377)

09 հունիսի 2026թ.

Թիվ 033-232

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 14 33 40 05530/69

(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/42» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՀԻԴՐՈ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից թիվ «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/42» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 114.080.500 (մեկ հարյուր տասնչորս միլիոն ութսուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև 30 հունիսի 2027թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ tender4@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/42» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Սիսիան» մասնաճյուղի կառավարիչ Հ. Գյուրջյան

Կատարող՝
Հարություն Յափունջյան
Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 8377)

Tender1

From: tender4 <tender4@minurban.am>
Sent: Friday, June 12, 2026 5:18 PM
To: tender1@minurban.am
Subject: FW: HYDRO LLC ծանուցում
Attachments: 033-233.pdf; 033-232.pdf

From: Emma Sahakyanv [mailto:Emma.SahakyanV@acba.am]
Sent: Friday, June 12, 2026 4:55 PM
To: tender4@minurban.am
Subject: HYDRO LLC ծանուցում

Emma Sahakyanv
Corporate Finance Support Specialist (Corporate Finance Support Team), Corporate Client Relationship Management Division
Corporate Business Department
Head Office | 82-84 Aram str., 0002 Yerevan, RA
Office +374 10 31 88 88
Mobile + 37491770188
Emma.SahakyanV@acba.am
www.acba.am

Սա Ակբան է: Իմ, քո, մեր Վստահության շրջանը:
This is Acba. My, your, our Circle of Trust.

Խնդրում ենք պահպանել բնությունը և տպել այս նամակը խիստ անհրաժեշտության դեպքում:
Please consider the environment and do not print this email.

This email and its attachments are only for the intended recipient. If you received this by mistake, please notify the sender and delete it. Sharing or using this info is not allowed. Acba bank is not responsible for the security of this message.